ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-23/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 19 » « հունիսի » 2023թ.**

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ո.Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝

Լ.Ավետիսյան

Ա.Մխիթարյան

Ն.Ֆերոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Մեհրաբյան

1.«ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-23/20» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ տեղեկություններ

1.1. «Շնակտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացրել է շտկված չափաբաժին 8-ով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

1.2. «Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է Հավելված N 1-ը՝ Դիմում հայտարարությունը և Հավելված N 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և չափաբաժիններ 1, 5, 6, 9, 10-ի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Հավելված N 1-ում՝ Դիմում հայտարարություն մեջ սխալ է լրացված պատվիրատուի անվանումը, իսկ ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում առկա են անհամապատասխանություններ՝ ներկայացված են «կամ համարժեքը», «Երաշխիքային ժամկետն առնվազն 730 օրացուցային օր», «թույլատրելի շեղումը 5%» և այլ բառերով:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Ո.Գրիգորյան)

2.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետը և Հրավերի 1-ին մասի 8.11 կետը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները՝ «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-23/20» ծածկագրով մրցույթի չափաբաժիններ 1-ով, 5-ով, 6-ով, 9-ով և 10-ով «Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

2.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն չափաբաժիններ 1-ով, 5-ով, 6-ով, 9-ով և 10-ով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

2.3. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-23/20» ծածկագրով մրցույթի չափաբաժին 8-ով հաղթող ճանաչել «Շնակտ» ՍՊԸ-ին:

2.4. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-23/20» ծածկագրով մրցույթի չափաբաժին 8-ով հաղթող ճանաչված մասնակցին՝ «Շնակտ» ՍՊԸ-ին, անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել՝

ա) պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ գնման գնի 10 տոկոսի չափով և

բ) որակավորման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ գնման գնի 15 տոկոսի չափով:

2.5. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.6. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ո.Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Ավետիսյան

_____ Ա.Մխիթարյան

_____ Ն.Ֆերոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Տ.Մեհրաբյան